

**Հարց:** Ինչ կարգով է իրականացվում Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումների կազմակերպումը:

**Պատասխան:** Համաձայն «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացվում են միայն մրցութային կարգով ընտրված կազմակերպություններին կանոնավոր փոխադրումների երթուղիների սպասարկման իրավունքը հատկացնելու միջոցով:

Կանոնավոր փոխադրումների երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման մրցույթները կազմակերպվում և անցկացվում են ՀՀ կառավարության, 2001թ օգոստոսի 16-ի N 762-Ն որոշման «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման» կարգի պահանջներով նախատեսված՝ կառավարման մարմնի որոշմամբ ստեղծված մրցութային հանձնաժողովի կողմից:

Ներմարզային երթուղիների ցանկը և մրցույթների անցկացման ժամանակացույցը հաստատում է համապատասխան տարածքային կառավարման մարմինը՝ նախապես համաձայնեցնելով նախարարության հետ:

Մրցույթին կարող են մասնակցել սահմանված ժամկետում հայտը և պահանջվող փաստաթղթերը ներկայացրած այն կազմակերպությունները (անհատ ձեռնարկատերերը), որոնք ունեն

ա) սեփականության և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման իրավունքով ձեռք բերված ուղևորատար տրանսպորտային միջոցներ,

բ) մրցույթին ներկայացված տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ թվով տրանսպորտային միջոցներ (սահմանվում է երթուղու սպասարկման համար անհրաժեշտ յուրաքանչյուր 1-5 տրանսպորտային միջոցի դեպքում՝ մեկ պահուստային տրանսպորտային միջոցի հաշվարկով)։

գ) տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումների, ընթացիկ նորոգումների և դրանց պահպանման համար անհրաժեշտ արտադրական բազա կամ նման արտադրական բազա ունեցող մասնագիտացված կազմակերպության հետ (որտեղ կազմակերպվում և հաշվառվում են նշված աշխատանքները) կնքված պայմանագիր։

դ) սեփականության կամ օգտագործման իրավունքով իրեն պատկանող հավաքակալային, որտեղ կազմակերպվում են ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական և վարորդների առողջական վիճակի ամենօրյա նախաուղերթային զննման անցկացումը:

Մրցույթի մասնակիցներին ներկայացվում են հետևյալ հիմնական պահանջները՝

ա) տրանսպորտային միջոց վարորդները պետք է ունենան տվյալ տրանսպորտային միջոցը վարելու համար անհրաժեշտ որակավորում (D կարգ) և սահմանված նմուշի հաստատված փաստաթուղթ։

բ) տրանսպորտային միջոցները պետք է համապատասխանեն անվտանգության, աշխատանքի ու շրջակա միջավայրի պահպանության և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին:

Կազմակերպությունը մրցույթին մասնակցելու համար մրցութային հանձնաժողովից ստանում է մրցութային փաթեթ:

Մրցույթի մասնակցության հայտերի և փաստաթղթերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 օր առաջ:

Մրցույթն անցկացվում է, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է նույնիսկ մեկ կազմակերպություն □

Մրցույթի մասնակիցը հայտի հետ միասին փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի փոխադրման գինը: Ծրարը բացվում է մրցույթի արդյունքների ամփոփման ժամանակ:

Մրցութային հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից:

Մրցութային հանձնաժողովը՝

ա) նախապատրաստում և հանձնաժողովը կազմավորող մարմնի հաստատման է ներկայացնում մրցույթների անցկացման ժամանակացույցը.

բ) համաձայն հաստատված ժամանակացույցի՝ հրապարակայնորեն հայտարարում է մրցույթի անցկացման մասին՝ ներկայացնելով մրցույթին մասնակցելու վերաբերյալ սույն կարգով նախատեսված տեղեկատվությունը.

գ) նախապատրաստում է մրցութային փաթեթը և սույն կարգին համապատասխան տրամադրում մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնած կազմակերպություններին □

Մրցութային փաթեթն ընդգրկում է հետևյալ փաստաթղթերը՝

մրցույթին ներկայացված երթուղիների չվացուցակները,

մրցույթի մասնակցության հայտը,

սույն կարգը.

դ) կազմակերպում է մրցույթի մասնակցության հայտերի ընդունումը, ուսումնասիրում ներկայացված փաստաթղթերի փաթեթը, որոշում դրա համապատասխանությունը սույն կարգի պահանջներին.

ե) մրցույթի անցկացման համար ապահովում է տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի ստուգման համար անհրաժեշտ հետևյալ պայմանները՝

տրանսպորտային միջոցների հավաքատեղի (հրապարակ),

էստակադ կամ զննման փոս,

հրապարակ՝ արգելակների արդյունավետությունը որոշելու համար,

էկրան կամ սարքեր՝ լուսարձակների կարգավորումն ստուգելու համար,

արտանետվող գազերի թունայնության և ծխայնության ստուգման սարքեր.

զ) իրականացնում է մրցույթին մասնակցող կազմակերպությունների տրանսպորտային միջոցների և արտադրական բազայի գնահատումը.

է) ամփոփում է մրցույթի արդյունքները և դրանց հիման վրա որոշում մրցույթի հաղթողին (հաղթողներին):

Մրցութային հանձնաժողովը հաստատված ժամանակացույցով մրցույթների անցկացման մասին տեղեկատվությունը հրապարակում է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև լիազոր մարմնի ինտերնետային կայքում՝ մրցույթի անցկացման օրվանից առնվազն 45 օր առաջ՝ նշելով՝

1) մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը.

2) մրցույթին ներկայացված երթուղիների ցանկը, երթուղիների սկզբնակետերը և վերջնակետերը, ինչպես նաև երթուղու սպասարկման համար պահանջվող ավտոբուսների (ներառյալ պահուստային ավտոբուսները) թիվը և տեսակը (ավտոբուսային կամ միկրոավտոբուսային).

3) մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

4) հայտը ներկայացնելու վայրը, օրերը, ժամերը, վերջին ժամկետը.

5) հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: